ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.12.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/320

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-51» գնանշման հարցում, սանհանգույցի վերանորոգման և պատուհանների մասնակի փոխարինման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18751-2021 գրությամբ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 10.11.2021թ.-ի թիվ 3/27/71855-21 գրության հիման վրա, 17.11.2021թ.-ին «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 17.11.2021թ.-ին:

17.11.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/320 համարի ծածկագիրը:

24.11.2021թ.-ին, 08.12.2021թ.-ին և 10.12.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.12.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.12.2021թ.-ին:

2. ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանությունը 10.11.2021թ.-ի թիվ 3/27/71855-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի համաձայն ներկայացնում է «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-51» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից՝ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 17.11.2021թ.-ին գրությամբ դիմել է «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18751-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

22.11.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ Ա/Ձ «Լիլիթ Դերձյան»-ը 2021թ.-ի հոկտեմբերի 21-ին մասնակցել է ՀՀ ոստիկանության կողմից հայտարարված «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-51» ծածկագրով մրցույթին էլեկտրոնային տարբերակով, մրցույթի կառուցվածքում նախահաշիվ-ծավալաթերթի բեռնման համար պատուհան չի եղել առանձնացված, ուստի չենք բեռնել, այնուհետև շտկման նամակ է ուղարկել պատվիրատուն, որը սակայն մեիլում հայտնվել է սպամ դաշտում և չենք տեսել, արդյունքում մեր կազմակերպությունը մերժվել է, և պատվիրատուն հայտ է ուղարկել, որպեսզի ՀՀ Ֆինանսների նախարարությունը մեր կազմակերպությունը ներառի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:

Մեր գործունեության ընթացքում էլի են եղել դեպքեր, երբ շտկամ նամակ ենք ստացել, բայց պատվիրատուները բացի նամակ ուղարկելը նաև զանգել են, մենք չենք պնդում, որ պատվիրատուն պարտավոր է եղել զանգել, բայց նման տեխնիկական խնդրի պատճառով խնդրում ենք մեր կազմակերպությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:»:

22.11.2021թ.-ին ներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«1.Գործի նախապատմությունը.

1.1 Ընկերությունը մասնակցել է Պատվիրատուի հայտարարած թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵԸԱՆՈՐՈԳՈՒ-Մ/2021/Հ-51 ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Մրցույթ): Սակայն, վրիպման հետևանքով հրավերով սահմանված ծավալաթերթ-նախահաշիվը Ընկերությաև ներկայացրած հայտում չի կցվել:

Ընկերության հայտը գնահատելով՝ Մրցույթի գնահատող հանձնաժողովը 21.10.2021թ-ի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ ծավալաթերթ-նախահաշիվը հայտում բացակայում է: Այնուհետև, գնահատող հանձնաժողովը նույն օրը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցելով Ընկերությանը առաջարկել է՝ հայտը շտկել և հայտում բացակայող ծավալաթերթ-նախահաշիվը մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 22.10.2021թ.-ը ներկայացնել Պատվիրատուին: Սակայն, ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը մեզ համար անհասկանալի պատճառներով հայտնվել է էլեկտրոնային փոստի սպամ թղթապանակում, որտեղ սովորաբար հայտնվում են վիրուսային և անցանկալի նամակները: Հաշվի առնելով համակարգչի համար այդ թղթապանակում կուտակվող նամակների վնասակարությունը մենք սովորաբար չենք բացում այն, ինչը նաև

տեղի է ունեցել տկյալ դեպքում: Նշյալի հետևանքով է, որ մենք այդ նամակը չենք նկատել: Եթե նկատ էինք, ապա մինչև 22.10.2021թ.-ը անպայման ծավալաթերթ-նախահաշիվը կներկայացն էինք պատվիրատուին: Իշևէ, հայտը շտկելու վերաբերյալ առաջարկությունը Ընկերությանը ուղարկելու օրվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրը՝ 25.10.2021թ-ին նկատելով հայտում առկա վրիպումը ծավալաթերթ-նախահաշիվը ուղարկել ենք Պատվիրատուին, բայց դա հաշվի չառնելով, Պատվիրատուն 25.10.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժել է: Որից հետո 17 աշխատանքային օր անց՝ 17.11.2021թ.-ին նախաձեռնվել է սույն ընթացակարգը:

2.Դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

2.1.Պատվիրատուի ուղարկած հայտը շտկելու վերաբերյալ առաջարկությունը անհասկանալի պատճառով ընդգրկվել է Ընկերությանը պատկանող էլեկտրոնային փոստի սպամ թղթապանակում, որի պատճառով վերջինս չի նկատել այդ նամակը և բաց է թողել հայտը շտկելու համար տրամադրված մեկ աշխատանքային օրը: Սակայն հայտում թույլ տված վրիպումը նկատելուց անմեջապես հետո՝ հայտը շտկելու վերաբերյալ առաջարկությունը ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը՝ 25.10.2021թ.-ին Ընկերությունը շտկված հայտը ուղարկել է Պատվիրատուին:

2.2.25.10.2021թ.-ին ուղարկած հայտի շտկումը հաշվի չառնելով Պատվիրատուն 25.10.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Ընկերության հայտը մերժել է, այնուհետև նույն օրը կազմված գրությամբ Ընկերությանը Ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն: Ընթացակարգը նախաձեռնելու վերաբերյալ հայտարարությանհամաձայն՝ Ընթացակարգը նախաձեռնվել է 17.11.2021թ-ին, այսինքն՝ Ընկերության հայտը մերժելու օրվան հաջորդող 17-րդ աշխատանքային օրը:

3. Հայցադիմումի հիմքերը, փաստարկները.

3.1. ՀՀ Սահմանադրության «Պետական կառավարման համակարգի մարմինները» վերտառությամբ 159-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Պետական կառավարման համակարգի մարմիններն են նախարարությունները, ինչպես նաև (...) նախարարություններին ենթակա այլ մարմիններ, (...) որոնց (...) լիազորությունները սահմանվում են օրենքով:»:

Պետական կառավարման համակարգի մարմինների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 18-րդ կետի համաձայն «2. Նախարարությանը ենթակա մարմիններն են՝ 18) գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. «3. Նախարարությանը ենթակա մարմնի ենթակայությունը համապատասխան

նախարարությանը սահմանում է Կառավարությունը:»: ՀՀ Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի 743-Լ որոշման 34-րդ կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմիններն են՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:

ՀՀ Կառավարության 2018 թվականի մայիսի 22-ի 580-ՍԼ որոշման 1-ին կետի 12-րդ ենթակետի (ա.) պարբերության համաձայն. «12) Ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին է՝ ա. գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք:»:

ՀՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 600-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝

«2. Բողոքը ներկայացվում է Լիազորված մարմին (այսուհետ՝ նաև Նախարարություն) գրավոր՝ Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Մելիք-Ադամյան 1 հասցեով կամ դրա բնօրինակից արտատպված (Ականավորված) տարբերակը secretariat@minfin.am հասցեով էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: (...):

3.Ստացված բողոքը նախարարության քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) կողմից մուտքագրվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ (այսուհետ՝ համակարգ) և նույն օրը համակարգի միջոցով տրամադրվում է Անձին՝ (գնումների հետ կապված բողոքներ քննող անձ) (...):

4. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը նախաձեռնում է նախարարությունը՝ Գնումների քաղաքականության վարչության միջոցով, համապատասխան փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձանց գրավոր տրամադրելու եղանակով: Ընդ որում, (...) ընթացակարգը համարվում է սկսված փաստաթղթերն Անձին տրամադրվելու օրվանից:»

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ! 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոգրյալի համաձայն, ՀՀ Ֆինանսների նախարարությունը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձինք՝ լինելով ՀՀ ֆինանսների նախարարությանը ենթակա մարմին, հանդիսանում են պետական կառավարման համակարգի մարմիններ: Այդ իսկ պատճառով ՀՀ Ֆինանսների նախարարության և գնումների հետ կապված բողոքներ քննող

անձանց լիազորությունները սահմանվում են օրենքներով, հետևաբար վերջիններս իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենքներով, մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրա իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

Հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի և Կարգի 45-րդ կետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) Պատվիրատուի ուղարկած հիմքերով նախաձեռնում է մասնակցին Ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նախարարությունը իրավասու է ընթացակարգը նախաձեռնել, երբ ի հայտ են եկել «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օր ենթ) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը և այդ հիմքերը Պատվիրատուն ուղարկել է Նախարարություն դրանք ի հայտ գալու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընդ որում վերջինս մասնակցին Ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգը պետք է նախաձեռնի հիմքերը սատանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Այլ խոսքով՝ Նախարարությունը իրավասու է մասնակցին Ցուցակում ներառելու վերաբերյալ ընթացակարգը նախաձեռնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ գալու՝ մասնակցի հայտը մերժելու օրվան հաջորդող առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Ընթացակարգը նախաձեռնվել է, քանի որ Ընկերությունը հայտը մեկ աշխատանքային օրվա ընթացքում չի շտկվել, որի հիմքով 25.10.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ Պատվիրատուն հայտը մերժել է և 25.10.2021թ.-ին կազմված գրությամբ Ընթացակարգը նախաձեռնելու նպատակով դիմել է Նխարարություն: Այսինքն՝ սույն գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ են եկել 25.10.2021թ.-ին: Ընդ որում, ըստ փաստական հանգամանքների՝ Նախարարությունն Ընթացակարգը նախաձեռնել է նշյալ հիմքերը ի հայտ գալու օրվան հաջորդող 17-րդ աշխատանքային օրը՝ 17.11.2021թ.-ին:

3.2. Այսպես՝ Համադրելով սույն գործում առկա փաստական հանգամանքները և սույն դիրքորոշման 3.1 կետը կարող ենք փաստել, որ այս ընթացակարգը նախաձեռնվել է Հրամանի և Կարգի վերոգրյալ նորմերի խախտումներով, հետևաբար այն անհրաժեշտ է դադարեցնել, քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունը և գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հանդիսանալով պետական կառավարման համակարգի մարմիններ իրավասու են միայն անել այն ինչի համար ուղղակիորեն փազորված են օրենքով: Տվյալ

դեպքում ՀՀ ֆինանսների նախարարի 600-ն հրամանի և ՀՀ կառավարության 526-Ն որոշման համաձայն՝ սույն ընթացակարգը հնարավոր էր նախաձեռնել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը ի հայտ գալու՝ Ընկերության հայտը մերժելու օրվան հաջորդող առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում, մինչդեռ այս ընթացակարգը նախաձեռնվել է նշյալ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող 17-րդ աշխատանքային օրը: Նշյալից կարող ենք փաստել, որ այս ընթացակարգը նախաձեռնվել է օրենքի խախտմամբ, ուստի այն անհրաժեշտ է դադարեցնել:

3.3. Ինչ վերաբերվում է հայտը մեկ աշխատանքային օրվա ընթացքում չշտկելուն, ապա այդ մասին կարող ենք ասել, որ դա տեղի է ունեցել ոչ մեր մեղքով, քանի որ Պատվիրատուի ուղարկած ծանուցումը մեզ համար անհասկանալի պատճառով հայտնվել է էլեկտրոնային փոստի սպամ թղթապանակում, որտեղ սովորաբար հայտնվում են վիրուսային և անցանկալի նամակները: Հաշվի առնելով այդ թղթապանակում կուտակվող նամակների վնասակարությունը համակարգչի համար՝ մենք սովորաբար չենք բացում այն, ինչը նաև տեղի է ունեցել տվյալ դեպքում: Նշյալի հետևանքով է, որ մենք այդ նամակը ժամանակին չենք նկատել և հայտի շտկումը ուղարկել ենք Պատվիրատուին հայտը շտկելու վերաբերյալ ծանուցումը մեզ ուղարկելու օրվան հաջորդող 2-րդ աշխատանքային օրը:

Եթե նկատէինք, ապա անպայման հայտի շտկումը մեկ աշխատանքային օրվա ընթացքում կներկայացն էինք պատվիրատուին, քանի որ գնման ընթացակարգին մասնակցելու ողջ նպատակը և տրամաբանությունը կայանում էր նրանում, որ մեր հետ կնքվեր աշխատանքների կատարման պայմանագիր, որի շրջանակներում կատարված աշխատանքների դիմաց ակնկալում էինք ստանալ շահույթ: Հարկ է նշել, որ անգամ այս պահին պատրաստ ենք Պատվիրատուի հետ պայմանագիրը կնքելուն և պայմանագրով սահմանված պարտավորությունները ողջ ծավալով կատարելուն: Նշյալից ավելի քան ակնհայտ է, որ հայտի շտկումը Պատվիրատուին չներկայացնելու որևէ դիտավորություն չենք ունեցել:»:

4. <u>ՍՑ-LO-2021/320 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից սանհանգույցի վերանորոգման և պատուհանների մասնակի փոխարինման աշխատանքների ձեռքբերման

նպատակով 13.10.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-51» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԲՄԱՊՁԲ-21-7/5» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 21.10.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հայտում բացակայել է ծավալաթերթ-նախահաշիվը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովը 21.10.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը:

vii. ՀՀ ոստիկանության կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 10.11.2021թ.-ի թիվ 3/27/71855-21 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18751-2021 գրությամբ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն ՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության կողմից սանհանգույցի վերանորոգման և պատուհանների մասնակի փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով 13.10.2021թ.-ին հայտարարված «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ/2021/Հ-51» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.10.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը 21.10.2021թ.-ին կայացված նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը:

ՀՀ ոստիկանության կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 10.11.2021թ.-ի թիվ 3/27/71855-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 25.10.2021թ.-ին՝ Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով, սակայն ՀՀ ոստիկանության կողմից Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարություն է մուտքագրվել 10.11.2021թ.-ի թիվ 3/27/71855-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում

է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» Ա/Ձ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.11.2021թ.-ի թիվ 26/26-1/18751-2021 գրությամբ «Լիլիթ Դերձյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/320 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**